*տանին տնտեսութիւնը, աւանդութիւնները, նախապաշարումնե-րը, տօների և հանդէսների նկարագրութիւնը, մէկ խօսքով նրանց ազգագրութեան ամբողջ տեղագրական ու բնութագրական մասը։*

*Դժբախտաբար այս ժողովուրդը շատ աղքատ է անգիր բանահիւսութեան կողմից։ Հեղինակը մեծ դժուարութեամբ կարողացել է ձեռք բերել մի քանի վիճակի երգեր, հաւաքել է տեղական օրհնէնքները, անէծքներն ու երդումները. և այսչափով վերջանում է բանահիւսութեան բաժինը։*

*Տառապող ու հարստահարուող ժողովուրդը ժամանակ չունի երգելու....։*

Հ. ԱՃԱՌԵԱՆ

Նոր—Ջուղա
1919 յուլիս 3